

Ա Յ Ո Տ

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

Ք Ա Ա Ա Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր

Թ Ա Բ 1.

Փ Ե Տ Բ Ա Ր 28

1877.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն . Բ Ա Լ Ա Ս Ի Ւ Ծ Ա Կ Ա Ն . Գ Ր Ա Գ Ի Ւ Ծ Ա Կ Ա Ն
Ե Ւ Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն

Շ Ա Տ Տ Ր Ո Ւ Թ Ա Ռ Ա Ռ Ա Ռ

Հ Ն Թ Ե Ր Ց Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Մ է Զ

Ա Մ Ե Ն գ ի ր ք կ ա մ հ ե զ ի ն ա կ ու թ ի ւ ն
ո ր ք բ ա զ ու մ ա ր ե ն ու թ ե ա մ բ է և մ ե ծ խ ը լ-
ն ա մ ով հ ե տ ա մ ո յ զ լ ե ր կ ա ս ի ր ա ց պ ա տ,
բ ա ս տ ա ւ ե լ ա վ ՝ ո ղ դ ա ց և ա ռ հ ա ս ա ր ա կ
ը ն դ հ ա ն ա ր մ ա ր գ կ ու թ ե ա ն կ ա ւ ա ն է
զ ա բ ի ն կ ա ւ մ է մ ա կ է ր ի ի բ ա զ մ ա ր դ ի ւ ն
հ ր ա շ ց շ ա ր է ի ւ , ա մ ե ն ք ն ա լ ո ւ ն ի ն մ ի
բ ա ր ի և զ ո վ ե լ ի ն պ ա տ ա կ , ա յ ն է ի ւ-
ր ո ր պ ա ն ի շ ե ր ն ի ւ ր պ ա ր ու ն ա կ ու թ ե ա մ բ
գ ա զ ա փ ա ր տ ա լ հ ե տ ա մ ու տ ը ն թ ե ր ց ա-
ս ի ր ի ն , լ ո ւ ս ա ւ ո ր ե լ ն ո ր ա մ ի ս ք ք , բ ա ր ձ
բ ա ց ու ն ե լ ն ո ր ա հ ո ր ի ն , զ օ ր ո ց ն ե լ
ն ո ր ա գ տ ա տ գ ու թ ի ւ ն ը , փ ա փ ի ր ա ց ու ն ե լ
ն ո ր ա ս ի ր տ ը և ա զ ն ու ա ց ն ե լ զ գ ա ց ու մ

Ժ Բ

ն ե ր ը , մ ի ո լ բ ա ն ի ւ ն պ ա տ ե լ և ծ գ տ ա-
կ ա ր ծ ա ս ու թ ի ւ ն մ ը մ ա տ ու ց ա ն ե լ
ա մ ե ն ա յ ն հ ե տ ա բ ն ն ի ն ը ն թ ե ր ց ա ս ի ր ա ց
ո ր ք ը ղ ձ ա կ ա թ հ ե տ ա մ ու ա ե ն ի ր ե ն ց
գ ա զ ա փ ա ր ը ը ն դ ա ր ձ ա կ է լ ու և մ ի ա ր ը
լ ո ւ ս ա ւ ո ր ե լ ու յ ա յ ա ն ե ա լ ձ մ ս ր տ ու-
թ ե ա ն ց և ս կ լ զ ա ն ց հ մ ո ւ թ ե ա մ բ ,

Ո ւ ս ո ւ մ ն ե ր ն ո ւ գ ի ս ո ւ թ ի ւ ն ն ե ր ն
ը ս ա ո ր ու մ զ ա ն ա զ ա ն ձ ի ւ զ ե ր ու և մ ա-
ս ա ն ց կ ը բ ա մ ն ո ւ ի ն ո ր ո ց ի ւ ր ա ք ա ն չ ի ւ ր ն
ե ւ ս ի ր ե ն ց ա ռ ա ն ձ ի ն հ ե տ ե ւ ո զ ն ո ւ ս ի-
ր ա հ ա ր ը ո ւ ն ի , ա յ ս պ ա տ ձ ա ռ ա ւ հ ե-
զ ի ն ա կ ու թ ի ւ ն ը կ ա մ ե ր կ ա ս ի ր ու թ ի ւ ն ք
ե ւ ս զ ա ն ա զ ա ն ձ ի ւ զ ե ր ու և մ ա ս ե ր ու

4

կը բաժնուին, որոց իւրաքանչիւրն իւր երկասիրի որ և է առարկայի վրայ ու նեցած առանձին հմտութիւնը և յատու կ գաղափարը կը պարունակէ, ոչ միայն այսլուփ այլ և ուսմանց որ և է մի առանձին ճիւղն եւս որովհետեւ ունի իւր բաղմաթիւ հետեւողն, հետեւաբար մի և նոյն ճիւղի վրայ իսկ կը լինին շատ գրուածներ և հրատարակութիւններ այլ և այլ անձերէ, որոց իւրաքանչիւրն նոյնպէս մի և նոյն առարկայի վրայ իրենց հեղինակաց տարբեր մուածութիւններն ու դատողութիւններն կը բոլոնդակեն, որք շատ անգամ ալ իրարու բալրուլին ներհակ լինելով, անհմուտ ընթերցողի առջեւ մեծ դժուարութիւն կը յարուցանեն շվաթելով նորա դատողութիւնը ուղիղ թիւրէն կամ ստոյգը անստուգէն որոշելու :

Ահա այս պատճառներով՝ բանասէր ընթերցալի նախ իւր չորատանջ աշխատութիւնը ՚ի զար ըլ վատնելու եւ երկրորդ իւր անհմտութեամբը թիւր գաղափարոց մէջ ը մոլորուելու համար իւր սկզբնաւորութեամբ ատեն կը պարտաւորի երկու ընարութիւն ընել խնամով և ուշադրութեամբ, նախ իւր սրտի յատուկ փափառանայ և իւր անձի մասնաւոր ձրից ուշ գնելու է թէ ուսմանց որ ճիւղին վրայ աւելի սէր և յարմարութիւն ունի, երկրորդ՝ թէ որ հեղինակներն իրենց խորին հըստութեամբ հասուն գատողութեամբ և արժանի վարկանին ուսումնական աշխարհի մեծամասնութենէն ընդունելութիւն և համակրութիւն գտած են, ուսումնախնդիր ընթերցասէրն այս ընտրութիւնները խնամով և ուշադրութեամբ կատարելէն զինի, եթէ ունենայ հաստատուն կամք եւ յարատեւ աշխատութիւն, կրնայ կանխաւ ապա հավլ լինիլ ապագայի մէջ իւր ունենա-

լիք յառաջադիմութեան և ըղձից պրակուելուն վրայ :

Այսպէս ուրեմն, խոհական ընթերցասիրին ընտրութեան և հետեւողութեան այս ջանքն ու եռանդն է որ օգտակար կ'ընէ իրեն այն հեղինակութեանց երկոյ եւ հրատարակութեանց ընթերցումը, որով վերահասու լինելով նաև նոցա յայտնած մկրդբանց և ձմարտութեանց՝ կը լուսաւորի մոօք, կը զարգանայ հոգւով և կը փայլի հանճարով, Անհատական ջանից և հետեւողութեանց այս եռանդն է նաև որ հետզհետէ բարգելով եւ բաղմապատկելով ներհուն և հմուտ անհատից թիւը կ'ընդհանրացնէ և կը ծաւալէ հասարակութեան մէջ բնական, բարցական և խմաստասիրական վարդապետութեանց լցոն ու ձմարտութիւնը . ուստի կը ծագի ազգային կամ ընդհանրական յառաջադիմութիւն եւ քաղաքակրթութիւն, որով կը հասնին իրենց նպատակին և կը պրակուեն այն բարեմիտ և մարդասէր հեղինակներն որք բալրում չարջորանօք և բաղմազիմի վշտակրութեամբ իրենց գտած սկզբունքներն ու ձմարտութիւնները անշահասէր ոգւով հասարակութեան նուիրելու վեհանձնութիւնը կ'ունենան :

Աշխարհի բալրը հեղինակութիւնները կամ գիրքերը ընդհանուր առմանք կարելի է բաժանել երկու մասի կամ ճիւղի, մին բարցական որ կը ծառայէ զարգացման և կատարելուգործութեան հոգւոյն, իսկ երկրորդն նիւթական որ կը ծառայէ մասաց մշակութեան եւ մարմնայ հանգստութեան . որոց երկուսն եւս ունենալով իրենց առանձին եւ յատուկ օգուաններն ու շահերն՝ արժանի են մարդկային ազգի համակրութեան և հետեւողութեան, սակայն երբ նուրբ ուշադրութեան

առնունք անոնց իւրաքանչլւրի առ
մարդկային ազգն մատուցած հիմնա-
կան եւ ընդհանրական օգտից աստի-
ճանները, այն ատեն կը տեսնենք եւ
անոնց իրարմէ ունեցած տարբերու-
թեան աստիճանները, որոց զանազա-
նութեան համեմատ եւս հարկ է որ
մարդն ալ զանազանութիւն և կարգ
դնէ զանոնք ուսանելուն մէջ ըստ ան-
միջական կարեւորութեան և ըստ օգ-
տից տարբերութեան :

Այս տարբերութեան կարգը դրա-
նելու և սահմանը որոշուելու համար
հարկ կը լինի նկատողութեան առնուլ
և ուսումնասիրել մարդը իւր կազմա-
կերպութեան ամբողջ մասունքներով.
Մարդն ըստ օրում զլիսաւորապէս եր-
կու մասունքէ կը բաղկանայ այն է ՚ի
հոգւոյ և ՚ի մարմնոյ, այն սրատձա-
ռաւ հարկ է նկատել նախ քան զամե-
նայն երկու գլխաւոր մասանց միմեանց
հետ ունեցած վերաբերութիւնը եւ
կախումը, որովհետեւ ինչպէս կը տես-
նենք միշտ մարդոյ կենդանութիւնը,
որով կ'ապրի նա կը շարժի կը գործէ
կը խորհի և մեծամեծ գործեր կը կա-
տարէ, նոյնպէս տեսած ենք շատ ան-
գամ նօրա մեռելութիւնը որով ան-
շարժութեան մատնուած մարմինը,
ոչ մի բանի չունի յարմարութիւն եւ
պիտանութիւն, ասկից կրնանք իմա-
նալ որ մարմինը կենդանութեան եւ
գործունէութեան մէջ գնուզը հոգին է.
մարդն հոգւով է որ կ'ապրի, հոգւով
կը գործէ և հոգւով կ'զգայ, և որպէս
զի մարդն իրեւ կատարեալ մարդ ար-
ժանապէս և ըստ օրինի ապրի և իւր
պարտքն ու իրաւունքը ճանաչէ թէ
առ Աստուած, թէ առ ընկերն և թէ
առ անձն, պէտք ունի նախ քան զա-
մենայն հոգւոյ կը թութեան և կատա-
րելագործութեան, որ ուրիշ բանով
չը լինիր բայց միայն բարոյական դաս-

տիարակութեամբ, որով զարդանարով
մարդն սրափ, հոգւոյ եւ զգացմանց
կատարելութեամբ՝ կը ներկայանայ աշ-
խարհի իրեւ անվեհէր և միր ախոյ-
եան, անձնուէր և անընկճելի ոչ մի
գժուարութեան առջեւ, այս եղանա-
կաւ ահա ճանաչելով մարդն իւր ան-
ձը և իւր ընկերը և առ միմեանս ու-
նեցած փոխադարձ պարտաւորու-
թիւնները՝ այնու հետեւ կրսկի խղճի
գիտակցութեամբ կատարել զանոնք և
այս պարտակատարութեամբ ու սիրով
միանալով իւր նմանւոյն, իւր ընկերով
եւ իւր եղոր հետ՝ կ'երջանկացունէ
զայն և կ'երջանկանայ, Այս է ահա
մարդոյ կը թութեան և ճշմարիտ յա-
ռաջադիմութեան էական, անմիջական
և առաջին կէտը, առանց որոց բոլո-
րովին անօգուտ և ապարդիւն կը լինին
ամեն գիտութիւնք և յառաջադիմու-
թիւնք, քանզի ինչի՞ կը ծառայեն այն
ամեն ուսմանց և գիտութեանց յա-
ռաջ բերած մեծամեծ արդիւնքներն
ու գիւրութիւնները, երբ անոնցմէ օ-
գուտ քաղել և երջանկանալ չը գիտեր
մարդն, ինչ օգուտ ունի շոգենաւուց
և շոգեկառաց ճանապարհորդութեան
համար մատուցած այն գիւրութիւն-
ներն, երբ մարդն իւր հայրենեաց իւր
բնակած տեղւոյն մէջ անգամ իւր քա-
ղաքացւոց և ընկերակցաց հետ վար-
ուելու մարդավայել եղանակը չը գի-
տեր, ինչ օգուտ ունի ելեքտրակա-
նութեան՝ հաղորդակցութեան համար
մատուցած այն հրաշալի արագու-
թիւնն ու դիւրութիւնը՝ երբ մարդ-
ոյն ինքն իւր քով ներկայ գտնուաղան-
ձանց և ընկերակցաց հետ հաղորդակ-
ցելու արժանավայել կերպը չը գիտեր.
ինչ օգուտ ունի երկնային մարմնոյ, և
երկրի ընդերց որպիսութիւնը քննե-
լու գիտութիւնն ունենալ, քանի որ
մարդ գեռ եւս իւր հոգին և սիրաց


քննելու գիտութիւնը չըւնի . ոյն գիտութիւններն , այն ուսումներն , այն յառաջնորդիմութիւններն եւ այն գիտերն ինչ նշոնակութիւն և ինչ արժէք ունին այն վայրենի աղքաց և ժողովրդոց համար . որոց հոգին զուրկ լինելով պարուց և իրաւանց գիտութեան լցուէն՝ իրենց համար չը կայ ոչ ընկերական , ոչ եղայրական և ոչ ընտանեկան կենաց քաղցրութիւն , այլ իբրև վայրենի գաղաններ ամսոյի վայրերու մէջ վայրենաբար ծնանելով , վայրենաբար կ'ապրին և նոյն վայրենութեան մէջ կը մեռնին . իբրեւ բայս մը որ անգէտ իւր էութեան և օրպիտութեան , այսօր կը բուսնի վաղը կապրի և ուրիշ օր մը խորշակահար լինելով ոչնչութեան կը մատնուի . վասն որոյ մարդն այն երկրորդական յասագիմութիւններէն արուեստական գիտութիւններէն օգուտ քաղելու համար պէտք է նախ բարոյական գիտութեան մէջ հոգւով զարդացած լինի , սրտով կրթուած և զգացմամբ աղնուացած լինի , որուն ՚ի սրաէ փափաքով ընթերցասէր անձն պէտք է ընտրէ իւր ընթերցասկութեան իրբեւ առաջին պէտք՝ հեղինակութեանց այն ճիւղը որ կը վերաբերի բարոյական , իւմաստամբութեան կամ աւետարանական վարդապէտութեան , և որ գրաւած է բազմաթիւ և ստուար հստորներ . բանզի մարդոց բարոյական կը թութեան այս ամենակարեւոր պէտքը նոյն իսկ հեթանոսութեան գտրերու խորին խաւարին մէջ , Քրիստոսի ծընունդէն շատ ժամանակյառաջ ոմանք զգօն եւ հանձարեղ մարդիկ զգալով աշխատած են խղճմուանաց ձայնին հետեւիլ եւ անոր առաջնորդութեամբ վարդապէտել ժողովրդեան զգաստութիւն համեստութիւն և ժուժկալութիւն , որց՝ ատեն ատեն բաւական

ունկնդիրք եւ հետեւ ողք եւս զրունուած են , սակայն ինչպէս որ առ անց Աստուածորդ ւոյն Յիսուսի մարդկազութեան՝ անհնար էր մարդկացին ազգի փրկութիւնն ու վերանորոգութիւն այն պէս ալ անհնար եղաւ հեթանոսական խաւարին մէջ՝ մարդկանց առ հասարակ այն բարոյական վարդապէտութեանց մեանց հետեւելը առանց յայտնութեան Յիսուսի Քրիստոսի բարոյական վարդապէտեանց . որ իրբեւ հեղեղ կ'ողողէր ամեն պատրաստուած եւ ընդունակ հոգի եւ արդաւանդ կ'առնէր . և ինչպէս Աստուածորդին Յիսուս իւր Աստուածուցին անհուն և անշափ միրոց զեղմամբ ամենամեծ ծառայութիւն մատոց բալոր մարդկացին ազգին առ հասարակ ՚ի հիմանէ նորուգելով զնոսա և վերականգնելով . որուն այնքան երկրորդ գարեր ամեն մարդկացին հեղինակութիւն անկարող զըտնուեցաւ , այսպէս ալ նորա Աստուածուցին վարդապէտութեանց և բարոյական օրինոց աւանդապահ , նուիրական կոտակն բարձր քան զամնայն հեղինակութիւնս մարդկացին ազգին օգտակար և արդիւնաւոր եղաւ մարդկաւթեան վերածննդեամբ քրիստոնեաց աշխարհին , որ իւր այսօրուան ունեցած յառաջադէմ եւ քաղաքակիրթ վիճակը կը սպարտաւորի միմիայն այն Աստուածուցին օրինագրոյն , որ Աստուածուցին անհուն իմաստաւութեամբ ամրապնդի կապած է մարդը մարդոյն հետ և սիրոց Տիեզերական վարդապէտութեան սկզբունքով բոլոր մարդկութիւնը մի մէծ գերդաստան ծուլած է :

Ահա այս ամենամեծ գերազանցութեանց պատճառաւ Աստուածորդւոյն Յիսուսի սոյն նուիրական կրտակը , որ է Ս . Աւետարանն , իբրեւ միակ կանոն մարդկացին ազգի թէ

Նի թական եւ իմ՝ բարյական վիճու
կի բարձրաւութեան հարի եւ ան
հրաժեշտ է օր մարդկային ամենաքի
տիր հեղինակութեանց մէջ անգամ
առաջնի տեղը բանէ և ամեն մարդց
առաջնի և հանուպազօրեայ ուսումնա
սիրութեան առարկայ լինի . քանզի նա
գիտութեան և խմաստութեան մի այն
պիսի անսպառ աղքիւր է , զօր մարդ
որչափ ընթերցասիլէ այնչափ լցու կը
գտնէ . որչափ հետազօտէ այնչափ նոր
խմաստներ կը տեսնէ և որչափ անով
զքակի այնչափ նոր գաղտնիալներով
կը լուսաւորուի և բարյական զքաւ
թեամբ կը կազդուրուի :

Դ . Ա . Շահներան :



ՏԵՐԲԻ ԿԱՍԻ Ի ՔՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ՏԵՐ

ԱՌԵՐԻ Ի ՀԱՅՐԻ :

ԳՈՒՆԵՑԻ :

ՈՐԴԻՇ ԵՒՔ ՏԵՐ ԸՆԼՈՒԽ
ՆԱՍԵԿԱՔ ՀՈՎՄՈ ԱՐԳԱԼԻՑ .
ԸՆՊԱՆԵԿԱՆ ԱՂԻՔ մեր
Ի յարհաւրցու անընդեր .
ՏԵՐԻ կաս 'ի քուն ՏԵՐ մեր ՏԵՐ .
Ո՛չ կորընչեմք դառն յեպեր :

ԱՌԵՐՈՒՔՍ 'ի լցու մինչ փթթեցան օտարին
Զրարկութիւն նախ յունկըն մեր հընչեցին .
Ընդ մայրենի անոյշ կաթին ըսպիտակ .
Զարտոսոր ըղթլու ձաշակեցաք մեք ցըշագ .
Մատաղ տիոցը թօնեցան վարդ գարունք
Կեղելական տրտմահալրդ յոզք և սուդ :
ՏԵՐԻ կաս 'ի քուն ՏԵՐ մեր ՏԵՐ .
Ո՛չ կորընչեմք դառն յեպեր :

Եիւր Սիօնի մեք կարգացաք երանիս +
Ո զիողերաց կովեալ զուռեաց տասնազիս +
Յոցնաւութիւնը յիշատակու Ստղիմոյ +
Ուզիս արտասուաց հեղցըր յազիս Սիրատաց +
Խոկ մեր արտում հէծեծանացըս վըկոյ +
Եւրոպ Արգիլ և Ամերիկ Ա.իա +
ՏԵՐԻ կաս 'ի քուն ՏԵՐ մեր ՏԵՐ .
Ո՛ կորընչեմք դառն յեպեր :

Ոսիքս անգութ բարձեաւ քրքիջ և ծիծառ
Վերաց սպանութիւն թշուառ զոյիս կենսանուառ +
Յոնդ յիրերաց ձգնին աւանդ կորդլ Դմել
Յորացնդուստ անդ մարտից յասպարէդ .
Եւ Հայկազննցըս կեանք և բաղդ մըթապատ .
Յազմականիս մեր գուլ կառաց շուք և զարդ .
ՏԵՐԻ կաս 'ի քուն ՏԵՐ մեր ՏԵՐ .
Ո՛չ կորընչեմք դառն յեպեր :

ՈՒԱՐԿԵՇՄ Հարուաց ծանակեցան սրոկատանք .
Դիռամն մնաց մինեցին լուծ և կապանք .
Օդիք այծիք պամարք և մնչք մեր համայն
Յանագորշն բըռանց յաւար մատնեցան .
Եւ մեր հանգոյն սին սաղարթուց աշնայնի
և բոցն հովմց 'ի գիւլ գլորիմք յերերի .
ՏԵՐԻ կաս 'ի քուն ՏԵՐ մեր ՏԵՐ .
Ո՛չ կորընչեմք դառն յեպեր :

Կա ւանիկ Հիւսոն
Մալնէ ցանեալի .
Ամակ և փոթորիկ
Հետոցն ևն կընիք .
Մըրըրիկ փայլակ
Ճակատուն պըսսակ .
Որոսմանիք և ձայթ .
Յոտին իւր 'ի կայթ .
Յաշացն հոսին թափ
Կարկուտ և տարափ .
Անմահ բարձրելոյն
Թուէ զինքն հանգոյն .
ԱՌԻ զաթուռ իւր մերձ
Լերանց բարձրաբերձ .
Գարշապարին Դառզ
Լիզուն սիրտ 'ի բող
Աղջըք և աղինք
Պետք ծիրանածնիք .
Անձնւէ իւր շաւզին
Աստեացըս ուղին .
Սիրտ իւր անձկայրեաց .
Յոզք որբոց այրեաց .
Լոկ ախորդ քըմաց .
Արիւն արտասուաց .

ՏԵՐԻ կաս 'ի քուն ՏԵՐ մեր ՏԵՐ .
Ո՛չնչ առնէ քել դառն յեպեր :